RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

2019

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ»
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

«Խոսքի ազատությունը չի արդարացնում ատելության որևէ դրսևորում: Չէ՞ որ բառերն ուժ ունեն. զգուշացե՛ք, եթե նույնիսկ մարդիկ ներում են: Մի՛ թողեք ցավոտ ժառանգություն և ափսոսանքի մի ողջ կյանք:
Դժբախտաբար, սոցիալական սգիտության սպառնալից հիվանդությունից հոգին պաշտպանելու և վիրավորանքը մեղմելու դեղամիջոցներ չկան, մի՛ ասիպեք մարդկանց մոռանալ՝ ինչպես ապրել»:

Լ. Մարտիրոսյան
«Իրավունքի կողմ» Իրավապաշտպան ՀԿ նախագահ

Lilit Martirosyan

Cover photo credit lightwise

Բովանդակություն

Նախաբան 4

Իրավական դաշտի վերլուծություն 6

Մեթոդաբանություն 8

Ատելության խոսք, վիրավորանք և վտանգավոր խոսք 9

Ատելության դրսևորումների փաստագրված օրինակներ 10

Առավել հաճախ օգտագործվող բառեր 12

Դիտարկման արդյունքներ 13

Նախաբան

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների ընթացքում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունները և հասարակության լայն շերտերի արձագանքները այդ փոփոխություններին՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նախաձեռնել է մշտադիտարկում ատելության խոսքի և վիրավորանքի վերաբերյալ:
Մյուս կողմից, հաշվի առնելով նաև հասարակությունում սրված դիրքորոշումները տրանսգենդեր անձանց իրավունքների և գոյության վերաբերյալ, սույն մշտադիտարկման առարկա են հանդիսացել խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչների, հանրային կարծիք ձևավորող անձանց և առացանց մամուլում տեղ գտած ատելության խոսքն ու վիրավորական արտահայտությունները տրանսգենդեր և ԼԳԲ համայնքի հասցեին:

Ատելության խոսքի հիմքում սովորաբար ընկած է խտրականությունը, որի հետևանքով մարդկանց խմբերը պիտակավորում են՝ ելնելով վերջիններիս կենսակերպից, սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, կրոնից, լեզվից, ֆիզիկական հատկանիշներից, գաղափարախոսությունից և այլ առանձնահատկություններից, և դառնում ատելության, ծաղրի և արհամարհանքի առարկա: Այսպիսով, ատելության խոսքը հանդիսանում է խտրականության գաղափարախոսական և հոգեբանական հիմք՝ նպաստելով նմանատիպ պատկերացումների ամրապնդմանը հաստատությունների, քաղաքական գործիչների, հանրային կարծիք ձևավորող անձանց և առանձին անհատների պահվածքում, որը կարող է հանգեցնել խտրականությամբ պայմանավորված գործողությունների:

Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

«Տրանսգենդեր» բառն ընդհանուր եզրույթ է այն մարդկանց համար, ում գենդերային ինքնարտահայտումը և/կամ ինքնությունը չի համապատասխանում ծննդյան պահին տրված սեռին:

Գենդերային ինքնությունը վերաբերում է անձի ներքին զգացմունքին, այսինքն, թե որ սեռի հետ է ասոցացնում տվյալ անձն իրեն (տղամարդ, կին կամ կին ու տղամարդ միևնույն ժամանակ, կամ գուցե ոչ կին, և ոչ տղամարդ), մինչդեռ գենդերային ինքնարտահայտումն այն ձևն է, որով անձն արտահայտում է իր գենդերային ինքնությունը՝ վարքի, հագուստի ձևի, սանրվածքի, ձայնի, մարմնի կամ այլ հատկանիշներով:

«Տրանս» եզրույթը երբեմն օգտագործվում է որպես «տրանսգենդեր» բառի կրճատում: Չնայած «տրանսգենդեր» տերմինը ընդհանրացված է՝ այն չի վերաբերում բոլոր այն անձանց, ում գենդերային ինքնարտահայտումը չի համապատասխանում հասարակության կողմից ընդունված «կանացի» կամ «արական» նորմերին:

Կարևոր է հիշել՝ ոչ բոլոր տրանսգենդեր անձինք են սեռափոխված կամ ցանկանում սեռափոխվել, և մարդու արտաքինից միայն չի կարելի որոշել մարդու գենդերային ինքնությունը:

Հայաստանի Հանրապետությունը՝ հանդիսանալով Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի անդամ պետություն, վավերացրել է ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և ստանձնել է որոշակի միջազգային պարտավորություններ, որոնց իրականացման վերաբերյալ միջազգային մարմիններին պարբերաբար ներկայացվում են համապատասխան զեկույցներ: Այդ զեկույցներում առավել հաճախ նշվում է, որ Հայաստանում ատելության խոսքի դրսևորումներ չեն լինում:

Այդուհանդերձ, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից իրականացվող առցանց մամուլի, քաղաքական գործիչների և հանրային կարծիք ձևավորող անձանց գործունեության ընթացիկ դիտարկումը ցույց է տալիս, որ իրական պատկերն այլ է, և առկա համակարգային խնդիրների պատճառով չեն գործում ատելության խոսքի վերաբերյալ տվյալների հավաքագրման և երևույթի կանխարգելման արդյունավետ մեխանիզմներ: Համակարգային խնդիրներից է նաև այն, որ ատելության խոսքի ներպետական իրավական կարգավորումները և արգելքները բնույթով սահմանափակ են, արդյունավետ չեն կամ որոշ դեպքերում բացակայում են:

Իրավական դաշտի վերլուծություն

Ատելության խոսքի առավել ընդգրկուն ձևակերպումը տրված է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարականում: Ըստ հանձնարարականի՝ «Ատելության խոսք եզրույթը պարունակում է խոսքի դրսևորման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականությունը, ցեղակենտրոնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը և ընդդեմ փոքրամասնությունների, միգրանտների և ներգաղթյալ անձանց նկատմամբ թշնամանքը և խտրականությունը»1: Հանձնարարականի 1-ին սկզբունքում անդրադարձ է կատարվում պետական պաշտոնյաներին՝ նշելով, որ «անդամ պետությունների կառավարությունները, ազգային, տարածքային և տեղական մակարդակի հանրային իշխանությունները, հանրային հաստատությունները, ինչպես նաև պաշտոնատար անձինք ունեն հատուկ պարտականություն ձեռնպահ մնալ այնպիսի հայտարարություններից, մասնավորապես՝ լրատվամիջոցներին, որոնք խելամտորեն կարող են ընկալվել որպես ատելության խոսք, կամ այնպիսի խոսք, որը հավանական է ստեղծի ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ խտրականության այլ ձևերը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության տարածումը կամ հրահրումը օրինականացնող ազդեցություն»2:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է խտրականության արգելքը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Նշված հոդվածի ձևակերպումից բխում է, որ պաշտպանվող հատկանիշների ցանկը սպառիչ չէ և չհիշատակված հատկանիշները կարող են ներառված լինել «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներում»: Միաժամանակ, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ «արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:
Հարկ է նշել, որ թեև ատելության խոսքը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չէ որպես հանցագործության տեսակ, օրենսգրքի 226-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու համար, որը կարող է դրսևորվել նաև ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններով: Սա նշանակում է նաև, որ նշված հատկանիշներից բացի (ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք), այլ հատկանիշների հիմքով թշնամանք հարուցելը չի համարվում հանցագործություն՝ ելնելով օրենսգրքի տրամաբանությունից3: Նույնը վերաբերում է օրենսգրքի ընդհանուր մասով նախատեսված քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներին, որտեղ ընդգրկված է վերոնշյալ հատկանիշներով պայմանավորված մոլեռանդությամբ հանցանքի կատարումը4:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ առավել հաճախ հանդիպող ատելության խոսքի դրսևորումներից է անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ խոսքը: Թեև սեռական կողմնորոշումը ներպետական օրենսդրությամբ ուղղակիորեն չի հանդիսանում պաշտպանվող հատկանիշ, վերջինիս վրա հիմնված խտրականությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից համարվել է նույնքան լուրջ, որքան ռասայական, ծագման կամ մաշկի գույնի վրա հիմնված խտրականությունը5: Միաժամանակ ԵԽԽՎ-ի 2008 թ. թիվ 1805 հանձնարարականում առաջարկվում է պատժամիջոցներ նախատեսել այն արտահայտությունների համար, որոնք կոչ են անում անձին կամ անձանց խմբին ատելության, խտրականության կամ բռնության առարկա դարձնել՝ կապված նրանց կրոնական կամ այլ հատկանիշների հետ6:

1 Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարականը, https://rm.coe.int/1680505d5b.
2 Տե՛ս նույն տեղում:
3 Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:
4 Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը:
5 Տե՛ս Vejdeland and Others v. Sweden գործը (դիմում թիվ 1813/07)
6 Տե՛ս ԵԽԽՎ 2008թ. թիվ 1805 հանձնարարականը,
http://www.assembly.coe.int/nw/xml/XRef/XrefXML2HTMLEN.aspfileid=17569&lang=en&fbclid=IwAR2DL_AMSMVPG2nLVXm_a4AsmEuRdf1gpDya4rDpoBJ5ZN7AkFr2GPqZ psU.

Մեթոդաբանությունը

ԶԼՄ-ների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ընթերցողների կամ հեռուստադիտողների շրջանում տարածվածությունը (սփռումը), ինչպես նաև նախնական դիտարկման արդյունքում ատելության խոսքի դրսևորման դեպքերի արձանագրումը առանձին լրատվամիջոցների հրապարակումներում: Առցանց աղբյուրների դիտարկումն իրականացվել է նաև որոնման համակարգերի միջոցով՝ օգտագործելով բանալի բառեր: Սոցիալական ցանցերում ներկայացված հանրային կարծիք ձևավորող անձանց դիտարկման նպատակով ընտրությունը կատարվել է՝ հիմնվելով ԶԼՄ-ներում վերջիններիս հրապարակումներին կատարված հղումների քանակի վրա՝ նախնական ուսումնասիրության արդյունքում: Դիտարկման արդյունքների արձանագրման համար մշակվել է ձևաթուղթ, որում լրացվել և նկարագրվել են դիտարկված դեպքերը ըստ աղբյուրների, հեղինակի կամ մեջբերման և ըստ թիրախավորվող խմբերի կամ հատկանիշի: Ամփոփման ընթացքում արձանագրված դեպքերը դասակարգվել են մի քանի տեսակի՝ «ատելության խոսք», «վտանգավոր խոսք» և «վիրավորանք»:

Ատելության խոսք, վիրավորանք և վտանգավոր խոսք

Ելնելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 Հանձնարարականում տրված ձևակերպումից, որպեսզի արտահայտված խոսքը համարվի ատելության խոսքի դրսևորում, այն պետք է՝

- տարածի, հրահրի, խթանի կամ արդարացնի ատելության ձևերը, և
- ատելությունը պետք է հիմնված լինի անհանդուրժողականության վրա:

Ուսումնասիրության ընթացքում ենթադրյալ ատելության խոսքի դրսևորման դեպքերը համադրվել են վերոնշյալ երկու չափանիշների հետ՝ դասակարգման նպատակով: Նշված չափանիշները վերաբերում են ատելության խոսքի բոլոր դրսևորումներին՝ անկախ հեղինակից կամ տարածողից: Այնուհանդերձ, հաշվի առնելով հանրային պաշտոնատար անձանց կողմից տարածվող հայտարարությունների առավել մեծ ազդեցությունը հանրային կարծիքի ձևավորման վրա, ինչպես նաև Հանձնարարականի 1-ին սկզբունքը, վերոնշյալ անձանց կողմից կատարված հայտարարություններն իրենց հերթին գնահատվել են հետևյալ չափանիշներով՝

- հայտարարությունն արվել է կառավարության, ազգային, տարածքային և տեղական մակարդակի հանրային իշխանության, հանրային հաստատության, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից, և
- հայտարարությունը խելամտորեն կարող է ընկալվել որպես ատելության խոսք:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ տարածված խոսքը, թեև պարունակել է խտրականության և ատելության տարրեր, այնուամենայնիվ ամբողջությամբ չի համապատասխանել ատելության խոսքի ձևակերպման չափանիշներին: Մի շարք հեղինակներ նշված դրսևորումներին անդրադառնում են որպես վնասակար7, վտանգավոր8 կամ վիրավորական խոսք եզրույթով: Ըստ ձևակերպման՝ վտանգավոր խոսքը արտահայտության ցանկացած դրսևորումն է (օրինակ՝ խոսք, տեքստ կամ պատկեր), որը կարող է բարձրացնել լսարանի կողմից՝ այլ խմբի անդամների նկատմամբ բռնությունը խրախուսելու կամ գործադրելու ռիսկը9: Խոսքի վտանգավորության աստիճանի վրա ազդում են հետևյալ հինգ հանգամանքները10.

- **բանախոսը**
- **լսարանը**
- **խոսքը**
- **սոցիալական և պատմական համատեքստը**
- **տարածման միջոցները:**

Խոսքը դառնում է առավել վտանգավոր, երբ նշված չափանիշները ստանում են առավելագույն դրսևորում՝

- **բանախոսը լսարանի վրա ունի բարձր աստիճանի ազդեցություն,**
- **լսարանն ունի դժգոհություններ կամ վախեր, որոնք կարող են ուժեղացվել բանախոսի կողմից,**
- **խոսքն ակնհայտորեն ընկալվում է որպես բռնության կոչ,**
- **սոցիալական և պատմական համատեքստը տարբեր պատճառներով նպաստավոր է բռնության համար,**
- **խոսքի տարածման միջոցներն ազդեցիկ են:**

Խոսքը համարվում է վիրավորական, երբ այն պարունակում է՝

- **խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտություն:**

Այն դեպքերում, երբ տարածված խոսքը չի համապատասխանել ատելության խոսքի չափանիշներին, սակայն, այնուամենայնիվ, պարունակել է խտրականության և ատելության տարրեր, համադրվել է վտանգավոր խոսքի կամ վիրավորանքի վերը նշված չափանիշների հետ՝ դասակարգման նպատակով: Օրինակ՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ Էդուարդ Շարմազանովն իր ֆեյսբուքյան էջում գրառում էր կատարել, որտեղ նշել էր «Այո, բան ա փոխվել մեր երկրում. ՀՀԿ-ի օրոք տրանսգենդերը ԱԺ-ում ելույթ չէր ունենա, կրթության նախարարն էլ այլասերվածի չէր ընդունի, ԱԺ-ում նմաններին չէին ծափահարի, Վեհափառի վրա էլ չէին հարձակվի:
Դրա համար էին «թավշիստները» ասում՝ բոբո ՀՀԿ-ն պետք է հեռանա: ՀՀԿ-ն ու դաշնակցությունը խանգարում էին պղծության քարոզին: Ասել եմ, ասում եմ՝ Հայաստանում նոր բաբելոնյան աշտարակաշինություն չի լինելու: Հայկը հաղթելու է Բելին»:
Տվյալ գրառման մեջ չկան սպառնալիքներ կամ ատելության խոսք, սակայն է. Շարմազանովը վիրավորել է տրանսգենդեր անձանց՝ անվանելով այլասերված:

7 "Harmful Speech Online project", Berkman Klein Center for Internet & Society, հղում՝ https://cyber.harvard.edu/research/harmfulspeech.
8 "Understanding hate and dangerous speech: a practical guide", 10.10.2018թ., Susan Benesch, Cathy Buerger, and Sean Manion, հղում՝https://dangerousspeech.org/understanding-hate-and-dangerous-speech-a-practical-guide/.
9 Տե՛ս նույն տեղում:
10 «Dangerous Speech: A Proposal to Prevent Group Violence», Susan Benesch, 23.02.2013թ., հղում՝http://dangerousspeech.org/guidelines/.

Ատելության դրսևորումների փաստագրված օրինակներ



Առվել հաճախ օգտագործվող բառեր

Ուսումնասիրության ընթացքում հաշվի է առնվել Հայաստանի պատմական-մշակութային համատեքստը Հայաստանում նախկինում կատարված ատելության խոսքի ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ուսումնասիրություններում11 հիշատակված ցուցիչ-բառերը՝ սեռական պատկանելության, գենդերային ինքնության սեռական կողմնորոշման համատեքստում:

Ներկա ուսումնասիրության ընթացքում վերհանված ցուցիչ-բառերով (ինչպիք են համասեռամոլ, արվամոլ, այլասերված և այլն) առավելապես ակնարկվել են թիրախավորված խմբերի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

Անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով դիտարկված ատելության խոսքի դրսևորումներում հաճախ օգտագործվում են համասեռամոլ, արվամոլ և այլասերված բառերը, որոնք մի շարք բառարաններում ներկայացված են որպես ախտ, հիվանդություն, իսկ այլասերված բառը որպես փչացած, արժեզրկված, անբարոյական12: Հարկ է նշել, որ 1990 թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների միջազգային վիճակագրական դասակարգման 10-րդ վերանայման արդյունքում նույնասեռականությունը հանել է վերոնշյալ դասակարգումից13:

Նշված դասակարգումը 2005 թ. հաստատվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի կողմից14:

11 «Կրոնի ազատությունը Հայաստանում» ուսումնասիրություն, Երևան, 2010 թ., Հայաստանի հելսինկյան կոմիտե, https://bit.ly/1iTeLAh, «Ատելության խոսքի դրսևորումները հայաստանյան ԶԼՄ-ներում», 31.01.2014 թ., Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, https://bit.ly/2LAMYGv, «Ատելության շարժառիթով հանցագործությունները Հայաստանի Հանրապետությունում», 24.03.2017 թ., Արա Ղազարյան, Ստեփան Դանիելյան, https://bit.ly/2LE22De:

12 Տե՛ս 13-րդ հղման մեջ նշված բառարանները:

13 https://www.who.int/classifications/icd/factsheet/en/

14 Տե՛ս ՀՀ ԱՏԶՆ 31.03.2005 թ. N 67-Ն հրամանը (ուժը կորցրած), https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18923, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013 թ. N 871-Ն հրամանը (գործող), https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=86263:

Դիտարկման արդյունքներ

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածը համընկել է քաղաքական մի շարք զարգացումների, ներառյալ՝ Տրանսգենդեր կնոջ ԱԺ ելույթի, Ստամբուլյան կոնվենցիայի հանրային քննարկումների, Ռուբերտ Քոչարյանի ձերբակալման և մի շարք նախկին քաղաքական գործիչների ձերբակալումների հետ, ինչի պատճառով այս ընթացքում վերը նշված հատկանիշներով անձանց խմբերը դարձել են բազմաթիվ շահարկումների և քաղաքական վեճերի առարկա:

Ստորև ներկայացնում ենք 2019 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կատարված պիլոտային մշտադիտարկման արդյունքում արձանագրված ատելության և վիրավորանքի դրսևորումների վիճակագրությունը և օրինակներ:

Լրատվամիջոցի անվանումը	Ատելության խոսքի դրսևորումների քանակը		Վտանգավոր խոսքի դրսևորումների քանակը		Վիրավորանքի դրսևորումների քանակը	
	Հեղինակային/ խմբակրական խոսք	Մեջբերում	Հեղինակային/ խմբակրական խոսք	Մեջբերում	Հեղինակային/ խմբակրական խոսք	Մեջբերում
«168.am»	0	1	1	5	0	2
«Երկիր»	0	4	0	3	0	3
«Իրավունք»	3	8	2	2	3	6
«News.am»	0	0	0	3	1	3
«Հրապարակ»	0	3	0	3	2	0
«Blognews.am»	0	0	0	3	0	5
«Analitik.am»	0	2	0	3	0	4
Ընդամենը	3	17	3	22	6	23

«Այո, բան ա փոխվել մեր երկրում. ՀՀԿ-ի օրոք տրանսգենդերը ԱԺ-ում ելույթ չէր ունենա, կրթության նախարարն էլ այլասերվածի չէր ընդունի, ԱԺ-ում նմաններին չէին ծափահարի, Վեհափառի վրա էլ չէին հարձակվի:

Դրա համար էին «թավշիստները» ասում՝ բոբո ՀՀԿ-ն պետք է հեռանա: ՀՀԿ-ն ու դաշնակցությունը խանգարում էին պղծության քարոզին:

Ասել եմ, ասում եմ՝ Հայաստանում նոր բաբելոնյան աշտարակաշինություն չի լինելու:

Հայկը հաղթելու է Բելին»:

ՎԵՏՕ նախաձեռնության հիմնադիր Նարեկ Մալյանն օրերս իր ֆեյսբուքյան էջում ահազանգել էր՝ Կուբայից Հայաստան են եկել ՁԻԱՀ-ով հիվանդ տրանսգենդերներ:

«Քանի որ մենք պետություն չունենք, ես տեղեկացնեմ ՀՀ քաղաքացիներին, որ Կուբայից ժամանած թվով 14 հատ տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիրներ են: Սա պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկություն է, կարող եք տարածել:
Ընդհանուր առմամբ 16 հատ են, որից 14-ը՝ ՁԻԱՀ վարակակիր: Ընդ որում, նրանցից մեկն աշխատում էր հացի փռում»,- գրել էր նա:

Էգը պետք է էգ լինի, որձը՝ որձ, էգն ու որձը խառնել եք իրար, էդպես չի կարելի. Վարդան Ղուկասյանը՝ ԱԺ ամբիոնից տրանսգենդերի ելույթի մասին

«Ես ասեմ բոլորին՝ որպես Ճառուկյան, որպես ԲՀԿ ղեկավար, որպես հայ ընտանիքի հայր, աղաթով, ավանդույթով, դաստիարակությամբ, հավատքով, եկեղեցիով, դա մեր համար անընդունելի է: Եվ ոնց որ միշտ եղել է, ասենք թե, դա արատ է, արատը ոնց որ եղել է միշտ թաքուն, պետք է թաքուն պահել: Մենք երբեք ու երբեք հնարավորություն չենք տալու, թույլ չենք տալու դա տարածվելու կամ օրինական ուժ ստանալու: Ոնց եղել ա օրենքը, որ մարդու իրավունքները բոլորն էլ իրավունք ունեն իրենց անձնականը պահեն, մինչև այսօր ինչ ընդունվել ա»,- այսօր ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում հայտարարեց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ճառուկյանը՝ անդրադառնալով ԱԺ ամբիոնից տրանսգենդեր անձնավորության ելույթին:

Ըստ նրա՝ ԲՀԿ խմբակցության պատգամավոր, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանն իրեն շատ ճիշտ է պահել.

«Այդ օրը օրակարգում այդպիսի հարց դրած չի եղել: Նա ուրիշ կերպ չէր կարող իրեն պահել, եթե պահեր, մեր կողքին չէր լինի»:

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

Պատրաստված է՝ «Իրավունքի կողմ»
իրավապաշտպան ՀԿ-ի կողմից
2020 թ-ին ©

RightSideNGO

@RightSideNGO

@RightSideNGO

www.rightsidengo.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

+374 11 880 770